

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ՄՈՎՏՀ – ի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռք բերման

ք. Երևան

06 մարտի 2015թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ի դեմս Աշխատակազմի ղեկավար՝ Հրաչյա Գևորգյանի, որը գործում է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Թատոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԶԾԽ մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի (ՄՈՎՏՀ) սպասարկման ծառայության (այսուհետ Ծառայություն) մատուցումը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող հմ.1 հավելվածով սահմանված Տեխնիկական հատկանիշների և հմ.2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցի:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցված Ծառայության ընթացքը և որակն՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառած վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի հմ.1 հավելվածով նախատեսված Տեխնիկական հատկանիշներով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական հատկանիշներով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Բննարկել և ընդունել Տեխնիկական հատկանիշներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում

Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարներն և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

#### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի հմ.1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել քերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2. Պատվիրատուն հանձնման - ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության գինը կազմում է 115000 (հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի հմ.2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավել տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի հմ.1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության արժեքի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԳԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՍԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ կատարման ավարտը:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հմ.1, հմ.2, հմ.3 հավելվածները, բաղկացած 3 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՍԱՆՆԵՐԸ  
ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան  
0204, ք.Աշտարակ, Հանրապետության 4

Աշտարակի ՏԳԲ

Հ/Հ 900441041176

ՀՎՀՀ 05004247

ԿԱՏԱՐՈՂ

«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ  
ք. Երևան 0033, Հ. Հակոբյան հմ. 3


«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570012431100500

ՀՎՀՀ 00001672



Արագածոտնի մարզպետարանի  
Մարզպետի պաշտոնակատար  
ԳԵՎՈՐԳՅԱՆ



«06» 2015թ. կնքված

N << 15707 >> ծածկագրով  
գնման պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ**

(<< քաղաքացիական ծառայության մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի /ՄՌԿՏ/ սպասարկման)

**<< Արագածոտնի մարզպետարանի**

1. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի Տեխնիկական և ծրագրային խափանումների արդյունքում, օպերացիոն համակարգի և ծրագրային փաթեթների տեղադրում կամ վերատեղադրում: Նախապես արխիվացված և պահպանված տեղեկատվական բազայի տվյալները վերականգնում:

2. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման աշխատանքի ուղեկցում և սպասարկում:

**ՊԱՏԿԻՐԱՏՈՒ**

<< Արագածոտնի մարզպետարան

0204, ք.Աշտարակ, Հանրապետության 4

Աշտարակի ՏԳԲ

Հ/Հ 900441041176

ՀԿՀՀ 05004247

<< Արագածոտնի մարզպետարանի

Աշխատակազմի ղեկավար

ԳԵԿՈՐԳՅԱՆ



**ԿԱՏԱՐՈՂ**

«ԵՐՄԱԳՀԻ» ՓԲԸ

ք. Երևան 0033, Հ. Հակոբյան հմ. 3

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570012431100500

ՀԿՀՀ 00001672



Ա.ԹԱՌՈՒՅԱՆ

Գնման ժամանակացույց

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Հավելված No 2

No -----

«Ք» Մարտի 2015թ.

ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավ	1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			Ընդամենը /դր./
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի Տեխնիկական և ծրագրային խափանումների արդյունքում, օպերացիոն համակարգի և ծրագրային փաթեթների տեղադրում կամ վերատեղադրում: Նախապես արխիվացված և պահպանված տեղեկատվական բազայի տվյալները վերականգնում: 2. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման աշխատանքի ուղեկցում և սպասարկում:	դրամ			28750			28750			28750			28750	115000
Ընդամենը														115000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

0204, ք.Աշտարակ, Հանրապետության 4

Աշտարակի ՏԳԲ


Հ/Հ 900441041176

ՀՎՀՀ 05004247

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

Աշխատակազմի ղեկավար՝

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ԿԱՏԱՐՈՂ

«ԵՐՄԱԳՀԻ» ՓԲԸ

ք. Երևան 0033, Հ. Հակոբյան հմ. 3

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570012431100500

ՀՎՀՀ 00001672



Տնօրեն

Ա.ԹԱՌՈՅԱՆ

« 06 » 12/2015թ. կնքված  
N..... գնման պայմանագրի

Պատվիրատու

Կատարող

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հասցե \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հասցե \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N \_\_\_\_\_

Հ Ա Ն Ջ Ն Ս Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Ս Ա Ն

« \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ « \_\_\_\_\_ » գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2015թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն, ի դեմս \_\_\_\_\_ և Կատարողն՝ ի դեմս \_\_\_\_\_, հինք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2015թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N \_\_\_\_\_ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը « \_\_\_\_\_ » 2015 թ-ից « \_\_\_\_\_ » 2015 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները.

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	-----	-----		-----

Վերոհիշյալ Ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը մատուցեց

Ծառայությունը ընդունեց

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_

ազգանուն \_\_\_\_\_

Կ.Տ

Կ.Տ